**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ***ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35*** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 3-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35-2»*** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հոկտեմբերի 31-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի (պարսպապատ) ամրակայման, վերականգնման, տարածքի բարեկարգման (ենթակառուցվածքների զարգացման) աշխատանքների կատարման ժամկետը Կապալառու կազմակերպության հետ կնքված համապատասխան համաձայնագրով երկարաձգվել է մինչև 30.11.2018 թ.-ը, ինչով պայմանավորված առաջացել է նշված աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման ժամկետի փոփոխության անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն N 1:** Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում ծառայության մատուցման ժամկետի ավարտը՝ «01.11.2018 թ.» բառերը փոխարինվել են «30.11.2018 թ.» բառերով:

**Փոփոխության հիմնավորում N 1:** ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

**Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «31» 10 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Տ. Սիմոնյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 3-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ ամրոցի (պարսպապատ) ամրակայման, վերականգնման, տարածքի բարեկարգման (ենթակառուցվածքների զարգացման) աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀՄՆ-ՄԱԾՁԲ-18/35-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածում ծառայության մատուցման ժամկետի ավարտը՝ **«01.11.2018 թ.»** բառերը փոխարինել **«30.11.2018 թ.»** բառերով:

### 2. Համաձայնագրի գործողության ժամկետը

**2.1.** Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

**2.2.** Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

### 3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ մշակույթի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,<br>Կառավարական շենք N 2,<br>հեռ.՝ (011) 58-51-78<br>ՀՎՀՀ 02508054,հ/հ 900011017630<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում | Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ<br>Հասցեն՝ ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3, 7-րդ հարկ<br>հեռ.՝ 52-66-18<br>էլ. հասցեն՝ pzhghk@mail.ru<br>ՀՎՀՀ 02511444<br>հ/հ 15700-21690740100<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Ս. Մուրադյան<br>(ստորագրություն) | Տ. Սիմոնյան<br>(ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |